

տասխանէ Մուղնեցիի մասին: Փետր. 26ին Մինաս վրդ.ի հաստատութեան թուղթը կը գրէ, որով իրաւունք կը տրուի անոր վերստին տիրանալու առաջին թեմերուն: Մայիս 31ին Ագրիանուպոլսոյ երկու թուղթերը կը գրէ: Յունիս 11ին դարձեալ Մինաս վրդ.ի թուղթը կը գրէ ու 26ին՝ Երուսաղէմի թուղթերը, զորս կը յանձնէ ուխտաւորներու: 1658 Մարտին Կ. Պոլսոյ իշխանաւորները կը խորհրդակցին ու Երեմիայի ձեռքով կը գրեն Երուսաղէմ Աստուածատուր պատրիարքին, որ կարևոր թուղթերը հետը առած՝ միաբաններով և ուխտաւորներով միասին գայ Կ. Պոլիս: Եոյն տարուան Մարտ 17ին Երեմիա իշխանաւորներուն մօտ կ'երթայ՝ գրելու համար Էտիրնէցիներու թուղթը, որով պատուէր կը տրուի անոնց՝ յարաբերութիւն չունենալ Թումա Բերիացիի հետ, որ իր պատրիարքութիւնը յաջողցնելու համար գացած է Ագրիանուպոլիս:

Յիշեցինք վերև թէ Եղիազար ու Մարտիրոս վարդապետներ երբեմն հետեւնին առած են Երեմիան իրենց ճամբորդութեանց ատեն: Զոր օր. Չէլէպի կ'ուղեկցի Եղիազարի՝ երբ սա 1659 Յուլիս 12ին կ'երթայ Պրուսա մեծ վէզիր Քէօփրիւլի Մէհէմէտ փաշային՝ մատուցանելու համար սահմանեալ նուէրը, որպէսզի շնորհուի Ս. Յակոբեանց վանքին վերադարձուիլը հրամայող կայսերական հրովարտակը, նաև ձեռք բերելու համար Ս. Սարգիս եկեղեցիի նորոգութեան արտօնութիւնը: Այս առթիւ Երեմիա 15 օր կը մնայ Պրուսա:

Մարտիրոս Ղրիմեցի չէզոքացնելու համար իր հակառակորդին՝ Ղազար Սեբաստացիի արարքները ու աշխատելու համար որ իրմէ չպահանջուի անոր աւելցնել խոստացած հարկը (միրի), կը ստիպուի 1660 Մարտ 17ին Երեմիայի ընկերակցութեամբ երթալ Ագրիանուպոլիս, ուր կը գտնուէին մեծ վէզիրն ու տէֆ-